ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

«29» 07 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000056

Ձեռնարկողը՝ ***«Ֆիլիշին» ՍՊԸ***
Տավուշի մարզ, գ.Հաղարծին,
1-ին փ. 10-րդ փակ. 15

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան Բաղրամյան 3-րդ նրբանցք 4/3 և 4/4 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000056

<29> 07 2020թ.

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան Բաղրամյան 3-րդ նրբանցք 4/3 և 4/4 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Ֆիլիշին» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել Երևանի Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան 3-րդ նրբանցք 4/3 և 4/4 հասցեներում՝ 11351,9 քմ տարածքի վրա: Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաբնակարան բնակելի համալիր:

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը բնակավայրերի և բնակելի կառուցապատման է, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Համաձայն տրված ճարտապետահատակագծային առաջադրանքի համալիրը ունենալու է 5 մասնաշենք՝ 5-12 հարկայնությամբ, երկհարկանի ավտոկայանատեղի ու ընդարձակ կանաչապատ բակ:

Նկարագրական մաս. տարածքն ամբողջությամբ կառուցապատված է եղել և, համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից 28.04.2019թ տրամադրված 01/18-Կ-3665-63 քանդման թույլտվության, տարածքում առկա շենք-շինությունները քանդվել և շինարարական աղբը տեղափոխվել է Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածք:

Ներկայացված նախագծի համար հիմք են ծառայել կառուցապատողի անշարժ գույքի սեփականության իրավունքի հ. 17062019-01-0048 և 17062019-01-0112 վկայականները, ինչպես նաև Երևանի քաղաքապետի կողմից տրված 04.06.2020թ. N01/18-07/1770-Ա ճարտապետահատակագծային առաջադրանքը:

Նախագծային ամբողջ աշխատանքները իրականացվելու են երկու փուլով, որից առաջին ընդգրկում է 4 և 5 մասնաշենքերը՝ իրենց ավտոկայանատեղիներով, իսկ երկրորդ փուլը 1, 2 և 3-րդ մասնաշենքերը՝ ստորգետնյա ավտոկայանատեղիով, կաթսայատնով ու պոմպակայանով:

Բնակելի համալիրի առաջին փուլում ընդգրկված 4 և 5 շենքերը հիմնականում 8 հարկանի են, իսկ 9-րդ հարկում նախատեսված է հիմնական ճակատից հետ ընկած ընդարձակ տեսարաններով մեծ բնակարաններ:

Համալիրը նախատեսված է իրականացնել բարձր էներգոարդյունավետության հիմնական սկզբունքների պահպանմամբ: Շենքերի ճակատները երեսապատվելու են օդափոխվող ճակատային համակարգերով, ջերմամեկուսացման արտաքին շերտով ու բնական քարե երեսապատմամբ:

Բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների բոլոր դռները նախատեսվում է իրականացնել հակահրդեհային նորմաներին համապատասխան:

Համալիրը նախատեսված է կառուցել կարկասային կոնստրուկտիվ համակարգով, տանիքները հարթ են՝կազմակերպված ջրահեռացմամբ:

Հողամասի չկառուցապատված հատվածները և հարակից տարածքները նախատեսվում է բարեկարգել:

Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

Տեխնիկական տվյալներ՝

-ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է՝ 11351.9 քմ

-կառուցապատման տոկոսը՝ 60%, մակերեսը՝ 6811,1

-կանաչապատման տոկոսը կազմում է՝ 40%, մակերեսը՝ 4540,8,

-Ավտոկայանատեղիներ՝ 395:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վարձակալել դրանք այլ կազմակերպություններից: Մասնաշենքերի կառուցման համար տեղադրվելու են երկու աշտարակային կռունկներ՝ QTZ 63 մակնիշի:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ՝ ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ մոտ 22,000 կգ և շինարարական աղբն է՝ 40տ քաշով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է տարածքում առկա «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցի միջոցով, որի համար կնքված է համապատասխան պայմանագիր:

Բնակելի համալիրի գազամատակարարումը 300խմ/ժամ նախատեսվող ծախսով իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շահագործման ընթացքում ջերմամատակարարումը կիրականացվի անհատական ջեռուցման կաթսաներով:

Տարածքում բնության հատուկ պահպանվող կամ պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Աշխատանքների իրականացումը /շինարարության տևողություն/ հաշվարկված է 25 ամիս:

Շինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող գործունեության տարածքում բնության հատուկ պահպանվող կամ պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է յուրաքանչյուր շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,

- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ,

- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է տարվա շոգ և չոր եղանակներին իրականացնել տարածքի ջրցանում՝ օրեկան 2-3 անգամ:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Ամբողջ շինարարաության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է՝ 1000000 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Կառուցապատման հետագա գործառույթները իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի 263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ֆիլիշին» ՍՊԸ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան 3-րդ նրբանցք 4/3 և 4/4 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Վ. Ռաիսյան